

Էրիզան 15 օրը անգամ մը կը
հրատարակուի :
Տարեկան գինն է 10 ֆրանք
Մէկ թերթը 2 դուրուշ :
Բաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ճամբու
ծախքը առնողին վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի :
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ գրութիւն, պէտք է
ուղղել առ իմբագիր :



ԳՈՐԾԱՎԱՆՈՒԹԻՒՆՔ
Կ. Պօլիս, Արամեան տպարան՝
Ատաբազար, Պ. Սայանորեան .
Տրապիզոն, Հ. Գ. Սարրեան .
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Խաչա-
տուրեան .
Նիկոսիդա, Մ. Յ. Նազարէ-
թեան .
Ջմիւռնիա, Յ. Տէտէեան .
Կարին, Կ Պատ. Ջաբարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսաճեան .
Հալէպ, Նիկ. Տ. Մարգարեան .
Ատանա, Մինաս Մկրտչեան .

Է Ր Ի Չ Ա Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երբ կ'ուզես գիտնալ թե աշխարհիս ազգաց մեջիւն հրե ե առնենե շու-
սաւորեալն ու հարուստը. հարցուր թե հր ազգն աւելի ընթերցասէր ե
կամ հր ազգն աւելի բուրք կը գործածէ :

Թի 2 Յունվար 15

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

— Ազգային. — Ուսումնական. — Առողջական. — Սիրա-
հարական Նամականի. — Փունջ :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Երբ՝ Ազգային կացութեան արդի վիճակը կը տես-
նենք, երբ՝ Հայկական լաստին հողմոց ու այեաց
հոսանքին մատնուած կը տեսնենք. երբ՝ ամէն ուրեք
ապականութեան տղմոյն մէջ Թաւազոր կանգնող
վտարանդի Հայութիւն մը կը նշմարենք ու կը հա-
մոզուինք թէ առանց հիմնական հաստատութեան մը
անկարելի է ազատիլ այն անողոր ճակատագրէն,
ուր այսչափ դարերէ ի վեր Հայութեան առաջ գա-
հալէժ խորխորատներ բանալով շատերը դեպ ի կո-

րուստ մղած, շատերը բաժանման յարած, ու բովան-
դակ Հայութիւնը այսօր չորս մասի բաժնած են. մէկ
մասը Հռոմի ամոռին կռնած, մէկ մասը Ամերի-
կացւոյն մէքենայական կոյր գործիք մը եղած. մէկ
մասն ալ տարիէ մը ի վեր (բարեկարգեալ եկեղեցի)
պօռալով Հայկական ճակատը անգղիացւոյն եպիս-
կոպոսական եկեղեցւոյն առաջ կը խոնարհեցնէ. հի
ղու Հայ. ինչ կը նշանակեն բու այս բաժանումներդ
յառաջադիմութիւն մը, հչ. հարստութիւն մը, հչ. ազ-
նուականութիւն մը, հչ. լուսաւորութիւն մը, հչ. ու-
րեմն ինչ են օրէ օր այս նորանոր շարժումները որ
միշտ Հայ ազգին մէջ կը տեսնուին. չենք սխալիր
եթէ այս շարժման (Նորաձևութիւն) անուանելու
ըլլամք :

Հիմնական հաստատութիւն ըսինք ու անցանք .
ինչ պիտի ըլլայ ուրեմն այս հիմնական հաստատու-
թիւնը՝ ինչպէս որ շատ մամուլներ՝ նոյնպէս ալ մենք
այսօր պարտք կը համարիմք. գրիչ բռնել ու տողեր
լեցնել. Անշուշտ այս Ազգը որ Հայ մարմին մը կը

կազմէ . անոր հիմնական հաստատութիւնն ալ Սահմանադրութիւն մը պիտի ըլլայ, այն Սահմանադրութիւնը ուր քանի տարիներէ ի վեր, սեւեռէմ Հայերու կրից խաղալիք մը ըլլալով անգործադրելի մընաց, և հիմայ հիլ գիտէ . որու ստուերին ներքեւ որ Յուդայի ձեռամբ՝ ամուր շղթայներու առաջ կնկնի . և որ վեղարաւորի դրդմամբ գահավէժ կը սահի . պարզամիտ Հայը՝ դեռ Սահմանադրութիւն . կարգ՝ կանոն՝ կերպզէ, սակայն խաւարին թօռն ու վեղարաւորին դահնական բռնի թուրը, անոնց երեսին կը ժպտի :

Անուրանալի է թէ՛ կրօնաւորք միշտ նաեւ տյսօր իրենց դերերը խաղալէ և շարունակելէ չեն դադրիր ազգերը յետադիմութեան և անշարժութեան մէջ պահելու համար : Նոյնը կրնանք ըսել նաեւ Հայ կղերին համար առանց զարմանալու . եթէ չես հաւատար Հայ գլուխ, գնա պատրիարքարան՝ տես վարչութեան յանձնուած գործերը, աչքէ անցուր լրագիրները, կարգա գաւառներէն հասած հառաչանաց նամակները, բողոքագիրներն ու յայտագիրները . անշուշտ պիտի լսես . անշուշտ պիտի տեսնես : Ուր որ ազգադաւ մատնութիւն մը . երկպառակութիւն մը . հաւատափոխութեան կարծիք մը՝ յափշտակութեան շարժում մը կայ, անշուշտ հոն կը նշմարուի . ու արեգական շառաւիղի նման ակներև կը փայլի, վեղարի մը կամ շուրջառի մը ստուերէն դուրս ցոլացեալ չորաբոյր թշնամանք մը . փառամոլութիւն մը . և անձնական շահու առաջնորդութիւն մը :

Այս ճշմարտութիւնը յայտնելէ ետքը՝ վայրկեան մը չենք դադարող Հայ ազգն ալ . Ովկիանու մրրկայոյզ ալեացը մէջխորասուզեալ նաւաբեկ թշուառի մը նմանեցնելու, որու մարդկային ընկերութեանց՝ այս քաշեալի վիճակէն ազատիլը անհնարին է առանց աչք սկզբմունքներու՝ որք միջին դարը տապալելէն ետք՝ ազգերը լուսաւորութեան՝ յառաջադիմութեան և բարօրութեան առաջնորդեցին ու հետզհետէ ալ պիտի առաջնորդեն . . . չեմ յուսար՝ բայց հիլ գիտէ կարելի է գտնուին այնպիսի միջնադարեան ծնունդներ՝ որ մեր այս ճշմարտութեան վրայ տրտընչանք մը ցուցնեն . սակայն (Էրիզան) իբր տկար

արձագանք Հայկական լուսաւորութեան իխոր սըրտէ նուիրական և սրբազան պարտք կը համարի . իրեն ծնունդ և սնունդ մատակարարող և Հայանունով աշխարհիս վրայ թշուառութեամբ ապրող ազգին մէջ տարածել ճշմարտութիւնը՝ ու միջնադարեան զուխներու առաջ հիմնայատակ կործանած Հայրենի պարիսպներուն վրայ կանգուն պահել արդարախօսութեան դրոշակը . որք Հայրենի ծան փառք և գրականական Հանդիսիս առաջին պարտաւորութիւնն է՝ ազատ գրել՝ և անաչառ խօսել, ոչ այս կողմը, և ոչ այն կողմը բռնել, այլ միայն այլ ընթացքով շարժիլ՝ ինչ որ Հայրենեաց գրկէ դուրս սլացող ու նախնեաց շիրմերու վրայ է հնչող Հայկազեան աշխարհի զեփիւռը ծծող ճշմարտասէր պատանւոյ մը ծառայական պարտքն է ; Իսկ շահասեր բաղդերու, և փառամոլութեան համար գրիչ երերցունել մարդկային ընկերութեան անարգանք . ու նախնեաց շիրմներու վրայ արիւնաներկ տառերով վատութեան գիծ մը բաշելէ ի զատ ուրիշ բան մը չէ :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Օ Պ

Օղը կազային այն հոսանիւթն է, որ երկրագնդին բոլորտիքը պատած է . և կը կոչուի մթնոլորդ կամ օդոլորդ : Օղը բարակ խաւ կամ կարգ մը ձևացուցած ժամանակը անգոյն է, բայց երբոր վրայէ վրայ խաւ ի խաւի կամ կարգ կարգ դիզուած երևի՝ գեղեցիկ կապոյտ գոյն մը կառնու, և ինքը կը կազմէ այն երկնքի կապուտակը, որուն վրայ աստեղք կը շողշողան, և ռաւիկը կարծէ թէ երկնային կամար է :

Երկրագնդոյս չորս դին տարածուած այս կազային գանգուածը՝ բնական երևութից մեծ մասին պատճառն է : Անհուն բնալուծարան մի է օղը որում անդադար բազմատեսակ բնալուծական հրաշալի գործողութիւններ, խառնուրդներ ու բաղադ-

րութիւններ կըլլան : Այս ամենածաւալ ընդունա-
րանք՝ երկրիս ջրերը գոլորշոյ ձևով դէպի իրեն ամ-
փոփելէն յետոյ՝ զանոնք կը տանի լեռներու ծայրե-
րը կը թափէ, ուրկէ գետահետեալ վար կիջնեն ուղ-
խօրէն : Հեռու տեղեր կառնու կը տանի օդը բու-
սոց արգասաբեր փոշին կամ սերմունքն, ու կեն-
դանեաց շատերուն հաւկիթը : Մէկ խօսքով տուն-
կերու աճելուն ու մեծնալուն և կենդանեաց շնչա-
ռութեան՝ որով և ապրելուն միակ պատճառ է
օդը :

Օդը հոտ ու համ չունի, մէկ լիտր օդը՝ ցրտու-
թեան վրայի աստիճանին և 0, 5 ցնշման տակ կը
կշռէ 1 կրամ և 29 հարիւրորդակրամ . այսինքն է
մէկ դրամի չափ :

Երկար ժամանակ օդը անկշռելի տարր կը կար-
ծուէր . իսկ եօթնեւտասներորդ դարուն սկիզբէն ի
վեր է որ երկրագնդին չորս դին պատած օդը կըր-
ցան կշռել . և ծանրութեանը չափն առնուլ :

Եղէգնիով մը Գուր Ժժել խմելը տղայական խա-
ղալիք մի է, սակայն այս տղայական խաղով հնա-
րուած է ջրհանի (*փօւնփ*) ըսուած օգտակար գիւտը :
Ջրհան ըսուածը գլխաւորաբար խողովակ մի է որոյ
մէկ ծայրը ջրին մէջ մտած է . իսկ միւսը գործի
(*շրվիկ*) մ'ունի որ մէջէն օդը կպարպէ . ինչպէս որ
եղէգնիկին օդը կը պարպեմք ծայրէն ծծելով . ուստի
եթէ այսպէս խողովակի մէջի օդը լաւ պարպուած
է, չուրը կրնայ մէջէն 10 մէթր գետնէ վեր բարձրա-
նայ, իւր վրայ ճնշում ընող արգելք մը չունենալով :

Օդոյն ծանրութիւնը գտաւ 1640 ին Գալիլէոս
Խտալացի բնագէտը երբ կը փնտռեր Թէ՝ ինչո՞ւ հա-
մար օդը պարպուած ջրհաններու խողովակին մէջ
ջուրը միշտ նոյն բարձրութեամբ վեր կելլէ . այսինքն
դրսի երեսէն գրեթէ 10 մէթր և 50 հարիւրամէթր
բարձր, և մտածեց Թէ այս երևոյթին պատճառ օ-
դոյն ծանրութիւնն է, որ հեղանիւթին երեսին
վրայ ծանրանալով՝ կստիպէ զայն ջրհանէն խողո-
վակին մէջ բարձրանալու, մինչև որ ջրոյն կշիռը
օդոյն կշռոյն հաւասարի :

Գալիլէոսի աշակերտը Թօրիչելլի, ուզեց իմանալ
Թէ ջրէ տարբեր խտութիւն ունեցող հեղանիւթոն

վրայ ինչ ազդեցութիւն ունի այս պատճառը :
Փորձի համար սնդիկ (*սկոփիտ*) առաւ՝ որ ջրէն տասն
և չորս անգամ ծանր է, Թէ որ Գալիլէոսին ջրոյն
ջրհանին մէջ բարձրանալուն տուած մեկնութիւնը
ստոյգ էր, դատարկութեան (*վիս*) մէջ սնդիկը տասն
և չորս անգամ քիչ պիտի բարձրանար : Փորձով
ստուգեց այս գուշակութիւնը . և օդոյն ծանրութիւ-
նը ամեն տեղ ճանչցուեցաւ :

Քիչ մը վերջը Փասքալ հռչակաւոր զաղղիացի
մատենագիրն՝ ուր երկրաչափը, գտաւ որ մթնոլոր-
դին ծանրութիւնը իր խաւերուն կամ կարգէրուն
համեմատ կը պակսէր, և 1646 ին ծանրաչափ
(*պսոսմէթր*) ըսուած գործին Փիւի-տը-Տեմ. ըսուած
լերան վրայ հանուելով՝ ճհարիւրորդամէթր վար
իջաւ :

Օդ ըսուած մարմինը տարր չէ . ինչպէս որ նախ
նիք այնպէս կը կարծէին . այն է բաղադրեալ մար-
մին մը : Բնալուծութեան այս նոր գիտութիւնը՝ որ
այս վերջին ատեններուս մէջ շատ մը մեծամեծ յա-
ռաջագիտութիւններ ըրած է, բազմաթիւ փորձերով
իմացուեցան որ տարր կարծեցեալ կամ պարզ մար-
մինը երկու տարբէր այսինքն Թժուածին (*օֆսիթեմ*)
և բորակածեն (*ազօդ*) ըսուած կազէրէ կը բաղկանայ,
որնոր մեկ հինգերորդ Թժուածին, չորս հինգերորդ
բորոկածին, նաև մէկ հարիւրերորդի չափ ած-
խային Թժու (*աւիս ֆառպօնիֆ*) պարունակելով օդ
ըսուած մարմինը կը գոյանայ, պէտք է աղէկ
գիտնալ որ շնչառութեան և առողջութեան համար
շատ ծառայութիւններ ունին այս կազային մար-
մինները . ասիկայ այնպիսի ճշմարտութիւն մընէ որ
հետեւեալ փորձերով կրնանք աղեկ մը համոզուիլ : Օ-
րինակի աղազաւ Թէ որ վանդակի մը (*էքոուպէթ*) ը-
սուած գործիքին մէջ Թռչնիկ մը դնելու և անոր չորս
կողմը զոցելով դուրսի օդոյն հետ ունեցած յարաբե-
րութիւնը կտրենք . քանի մը վայրկեանէն մէջը եղած
օդը ապականուելով կը տեսնուի որ յանկարծ Թռչ-
նիկը կսկսի կամաց կամաց գետնհար ըլլալ, այս
փորձով կը հաստատուի որ անասունները ապակա-
նեալ օդին մէջ չեն կարօղ ապրիլ . վասնզի վանդա-
կին մէջի Թժուածինը պակսելով ածխային Թժուն

աւելցած է . ուրիշ փորձով մ'ալ կիմացուի որ և իցէ կենդանիները ոչ մինակ բօրակածին կազին մէջ և ոչ ալ մինակ թռուածին կազին մէջ կրնան ապրիլ առանց վնասուելու :

Օդահան մեքենային (մաշին փնէտմարիֆ) հնարուելէն ի վեր ամենադիւրին է ցուցուել թէ օդն ու ամէն կազերը հաստատուն ու հեղուկ մարմնոց պէս ծանրութիւն ունին : Օրինակի համար զունդ մը առնումք որ ծոծրակ մը (ռօպիկէ) ունենայ , օդահան մեքենայով գնդին մէջ եղած օդը պարպէ , ծորակը զոցէ ու կշռէ , յետոյ փոխակը բաց որ մէջը օդ մտնէ և նորէն կշռէ , անմիջապէս կը տեսնես որ կշիռը աւելցեր է :

Այսպէս կրնայ ամէն մարդ իմանալ որ օդը ջրէն 770 անգամ աւելի քիչ կը կշռէ , այսինքն 770 լիտր օդը 1 քիլիկրամ կը կշռէ , և կամ մէկ լիտր ջրոյ ծանրութիւնը ունի :

Թէ որ օդը երկրիս երեսն ունեցած խտութիւնն ամէն տեղ ևս ունենար , կարելի չէր մթնոլորտին 20 մղոն կամ 80 հազար մէթր բարձրութիւն տալ , ինչպէս որ սովորաբար կուտան բնագէտք . այլ ընդհակառակն հազիւ 2 մղոն կամ 8 հազար մէթր կըլլար . վասն զի երկրիս երեսին գրոյ օդն 770 անգամ նուազ խիտ կամ նուազ ծանր ըլլալով քան զջուր , եթէ 10 մէթր բարձրութեամբ ջրի սիւնակ մը (յունը φοῦς s'o) առնումք՝ որ նոյն խարիսխն ունեցող մթնոլորտի սիւնակին կշռոյն հաւասար է , կը տեսնենք որ նոյն մթնոլորտի սիւնակը 770 անգամ 10 մէթր կամ 7700 մեթր բարձրութիւն կունենայ , որ հազիւ երկու մղոն կընէ :

Օդոյն վերի խաւերը վարի խաւերուն վրայ իրենց կշռովը ծանրանալով՝ իրենց կրած ճնշմանը համեմատ անոնց խտութիւնը կաւելցնեն , ուստի ասկէց կիմացուի որ երկրիս երեսէն որչափ աւելի բարձրանալով մթնոլորտին վերի եզերքին մօտենամք . այնչափ ևս օդին խտութիւնը կը քիչնայ , և ասոր ապացոյցն է Փասքալի ըրած փորձը :

Բարձր տեղոջանք , զօրօրինակ լեռներու ծայրը մարդս աւելի մէկ հանգստութիւն մը որ կիմանայ պատճառը օդին անօսրութիւնն կամ բարձրութիւնն

է , վասն զի կուրծքին վրայի ճնշումը պակսելով կրնդարձակուի . անով շնչառութիւնն աւելի դիւրին կըլլայ , և կարծես թէ բոլոր անդամոց մէջ կեանքն աւելի ազատօրէն իւր շրջանը կառնու , սակայն չափէ դուրս բարձր տեղ փոխանակ հանգստութիւն իմանալով՝ տկարութիւն ու զլխի պտոյտ կիմանամք , և ներքին հոսանիւծոց առաձգականութիւնն արտաքին ճնշմամբ բաւական չզսպուելով՝ կրնայ վտանգաւոր արիւնահոսութիւններ ևս պատճառել . վասն զի ամէն մարմին ծակտիքներ ունի , բայց որը աչքով կը տեսնուի , որն ալ՝ մանրացոյցով և ուրիշ այլևայլ փորձերով ալ կը յայտնուի :

Մարդուս մօրթը ամէն կենդանիներէն աւելի ծակեր ունենալը զարմանալի բան է : Ղէւենօք փիլիսոփան $\frac{1}{10}$ մատ երկայն մարդուս կաշիին վրայ , մանրացոյցով փորձ մը ըրած ատենը 100 ծակ համրեց : Ասկէց հաշուելու ըլլամք , մէկ քառակուսի մատի վրայ մէկ միլիօն ծակ պէտք է որ ըլլայ , ասոր ստոյգ ասանկ ըլլալը մարդուս քրտինքէն ու մարմնոյն վրայ քսուած զանազան ապեղանիքներէն յայտնի կերևի , և որոնք ծակերուն մէջէն ներս կը մտնեն ու մարմնոյն առողջութեան դեղ կըլլան :

Օդոյն ծանուցեալ ծանրութեանն համեմատ եթէ ուզենք դիտել թէ մթնոլորտին զանգուածն երկրագնդիս երեսին վրայ ինչ ճնշում կընէ , պէտք է որ երկրիս երեսը հարիւրամասն քառակուսոյ վերածենք , և կիմանամք որ երկրիս հարիւր հնգամիլիօն հազարակրամ (ֆիջօկրամ) ծանրութիւն կկրէ : Եւ որովհետեւ մարդուս մարմինը սովորաբար քառակուսի մէթրի $\frac{1}{4}$ մասն է , զրեթէ վրան կը ծանրանայ ու զինքը կը ճնշէ , ինչպէս որ ուրիշ որ և իցէ հեղանիւծ իւր մէջն ընկղմած մարմինը կը ճնշէ :

Գուցէ ընթերցողաց շատերը չուզեն հաւատալ փոպծելով որ եթէ իրաւցընէ մարդիկ վրանին 15 հազար քաշ բեռն կրէին՝ տակը կը ճզմուէին , ուր ընդհակառակն մեք հիմայ և ոչ տրամ մի բեռն կամ ծանրութիւն կ'զգամք : Արդարեւ իրաւունք ունէին այսօժս մտածելու , և մեք նոյն սոսկալի բեռան տակ կը ճզմուէինք կիյնայինք՝ թէ որ մեր ներսի հո-

սանիւթներն ևս նոյնչափ ուժով մարմինն են քսէն դուրս չիրէին . որով հաւաքարակշռութիւնն հաստատուելով օդին դրսի ճնշմանէ բնաճ նեղութիւն չեմք իմանար :

Լողալու ժամանակ շատ անգամ երբոր կնկրմինք, զլուխներնուս վրայ 2 կամ 3 մեծ ջուր կունենանք, և բնաւ իսկ նեղութիւն մը չեմք կրեր , ստորին ու կողմնական խաւերը վերի խաւերուն հետ հաւասարակշիւ կը փճացնեն այն ծանրութիւնն՝ որ ինքնիրէն բաւական էր մարդս տակը ոգեսպառ ճգմելու : Ինչպէս որ ջուրն իրմէ թեթեւ եղած մարմինները իւր վրայ կը լողացնէ , նոյնպէս նաեւ օդը իրմէ թեթեւ եղած մարմինները վեր կը հանէ : Եւ ահա իւր այս յատկութեանը վրայ ճիմնուած է օդապարիկը (պաշօն) օդէն աւելի թեթեւ կազով մը լեցուելով՝ վեր կը բարձրանայ մինչև որ իրեն հաւասարակշիւ անտրացած՝ այսինքն մինչև որ իրեն պէս թեթեւ կազ մը գտնեն :

Օդն որչափ տաքնայ աւելի կը թեթեւնայ և այն է պատճառն որ ծխնելոյզներուն (շըմիւնե) մուխը փոխանակ վար գարնելու՝ անտրացած կամ տարութեամբ թեթեւցած օդոյն հետ վեր կելլէ : Անյիշատակ ժամանակէ ի վեր վաճառականութիւնն ու նաւարկութիւնը յօգուտ ի կիր արկած են . օդոյն սաստիկ դիւրաշարժութենէ յառաջ եկած մթնոլորտի հոսանքը՝ ընդարձակ երերածուի տներ տեղափոխելու համար , որ ծովերու լեռնակուտակ ալիքները վրկտրեն կսնցնին :

Շարունակելի

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Մարդկային ամուսնական կենաց վրայ ընդհանուր տեղեկութիւն .

Աշխարհիս վրայ ամէն կենդանեաց գոյութիւնն ու տեւողութիւնը բնական ազդեցութենէ ծնունդ կառնէ , եւ այս բնական ազդեցութիւնը մարդկանց միաւորութեանը կը կարօտի :

ԾՆՈՒՆԻ : Ամուսնութիւնը բարեգիտական համարուելով , մարդկային ընկերութեանց մէջ բնական ազդեցութեան մի եւ նոյն գործիքը կը տեսնուի , եւ որով մարդկային միաւորութեան բուն պատճառն ալ այս վախճանէն հետի չէ :

Բոլոր քաղաքակրթեալ ազգաց մէջ , ամուսնութիւն կը կոչուի , արանց եւ կանանց միաւորութիւնը , ըստ օրինի այս երկու ստեղծուածոց մէջ որչափ սիրելի ու խանդաղատելի տարիական քաղցրութեամբ զգայուն բարեգործութիւնք որ կան , գաղափարնին երջանկութեան ու բաղդաւորութեան մէջ մեծցնել է սիրելի զաւակներնին . այդ եւ կին միշտ իրաւուն պաշտպան կանգնելու խոստմամբ : Իրենց ծըննդեան երկրորդ վախճանն է տղաքնին բնական եւ բարոյական դաստիարակութեամբ մեծցունելով՝ զանոնք մէյմէկ առաքինի եւ կրթեալ անձեր ու օգտակար քաղաքացիներ ընել : Ահաւասիկ ամուսնութեան մը բուն նպատակը , որով ընտանի ընկերութեանց երջանկութեան գլխաւոր ապացոյցն է : Սակայն տգէտ եւ անկիրթ մարդիկ բնութեան այս սրբազան պաշտօնը չը գիտնալով կարծեն թէ ամուսնութիւն ըսելը միայն բնական կիրք մը յագեցնելն է : Այս պատճառաւ ինչպէս որ միշտ աչքերնուս առաջը պարզ կը տեսնուի , անկիրթ անձանց ողորմելի խուճ մը որ իւր ընտանեաց փառակար եւ տաղտկալի ըլլալէ ի զատ՝ ուրիշ արդիւնք մը չունին . արդեօք ինչ է , եւ ո՞րկէ առաջ եկած է ասոնց այսպիսի ցաւալի վիճակը . եթէ ոչ տգիտութեան մը չարաբոյր արգասիքն է :

Ամուսնական ուղիղ զգացմամբ , ծննդական պարտաւորութեան սէրն ու խնայողութիւնը կը բազմապատկի ու կը զօրանայ . մարդս բնական ու բարոյական կարողութիւնն ի գործ դնելով կը ջանայ փութանակի հոգալ եւ հատուցանել ընտանեաց պիտոյքը : Կինը սիրէ ու կը խնամէ իւր այրը , իսկ այրը տեսնելով ամուսնոյն իր վրայ ունեցած սէրն ու համակրութիւնը կը պաշտէ ու կը պաշտպանէ զայն : Վերջապէս ամուսնութիւնը այս եւ կին բնականաբար մէկգմէկ կասկելով ըստ բաղձանաց համեմատ կարող կըլլայ բարի վարուք զգայական ցանկութեանց եւ լկտի կրից առաջըն առնուլ :

Արդեօք որչափ ցաւալի կերելի մեղ բնութեան այս օրէնքը ճանչնալ ու փոքրիկ ակնարկ մը մեր ազգայ-

նոց տգիտական զգացմանց խորը թափառողներու վրայ ակնարկ մը չը նետել - Որչափ կը սոսկամբ երբ զանոնք սիրոյ եւ միութեան սահմանէն դուրս ցատկած այսինքն՝ այրը կնոջ եւ կինը երկանը հետ կը ունենր եւ բանական բանալ . . . դրացի բարեկամները ձանձրացունել , վատաբար հայհոյութիւններ ընել . . . եթէ չեղաւ « Կրակ » պօռալ , օրերով , շաբաթներով թաղականներու եւ նոյն իսկ Պաարիարքարան դիմել . . . ու անկէ ալ գուրա՝ վրադնառնելին տեսնել : Ռեբեկա ինչ եւ ով է այս ամէն չարեաց մայրը . ո՛չ մէկը , այլ տգիտութիւնը :

Բնականաբար եւ քողաքականաբար արանց եւ կանանց իրաւունքը մի եւ նոյնն է , որ օրէ օր այս գաղափարը երթալով կը բազմապատկի . եթէ արական սեռը արարածոց թագաւորն է , իգական սեռն ալ անոնց սիրուն թագուհին կը սեպուի , եւ այս իրաւանց հաւասարութեամբ է՝ որք կը պարտաւորին փոխադարձաբար զիրար գգուել ու մէկգմէկէ կախում ունենալ , կատարեալ հաւասարութեամբ՝ ամուսնական կենաց մէջ , Իսկ եթէ մէկը օրինազանց ըլլալով իր վիճակը չարաչար վարէ , այսինքն բաժանման ցնորքը ձեռք առնէ . միւսն ալ նոյնը ընելու իրաւունքը կունենայ :

Փիլիսոփայական երեւելի փորձերով իմացուած է , որ մարդկային բնական վիճակն՝ այսինքն տղայոց եւ աղջկանց ամուսնութեան ցարիքը մօտենալուն պէս՝ ամուսնութիւնը կատարեալ եւ յարմար առիթ մը չը կրնար սեպուիլ , ինչուան չափահասութենէ բաւական տարիներ վերջը : Երբ գործարանները իրենց ամբողջ աճումն առնեն , մադս նոյն վայրկեանին կարող կըլլայ ծննդական գործողութեանց ապահովութիւն մը տալ : Գործարանաց բաւական աճմանն ու կարողութեանը համեմատ ամուսնութիւնը պէտք է յարմար տարիք մը ունենայ : Մտերմական յարգութիւնը իրենց նեցուկ ըլլայ . եւ որով միաւորութիւնը միակ երջանիկ տեւողական ու յաջող յարատեւութիւն մը կունենայ :

Հին եւ նոր փորձերէ վերջը հասկցուեցաւ որ մեկու մը ամուսնութեան եւ ծննդական պտղոյն յարմար ժամանակն է ընդհանրապէս . տղու մը համար 25էն ինչուկ 40 տարին եւ 18էն ինչուկ 30 տարին աղջկան մը համար : Այս տարիքէն առաջ տեղի ունեցած միաւորութեան կանխահաւ կամ վաղահաւ ա-

մուսնութիւն կը կոչուի . իսկ այս վերոգրեալ տարիքէն վերջը տեղի ունենալիք միաւորութեան անագահաւ ամուսնութիւն կը կոչուի : Սակայն անպաշտան կըսուի այն միաւորութեան՝ երբ մէկուն տարիքը միւսին հակառակ եւ տարբեր է : Ոսքերնիս չերկարելով պարտք կը համարին քհնեւեալութեամբ այս երեք տեսակ միաւորութիւններէ ծագած՝ անհամար եւ աղետալի միասակար կէտերը՝ մեր ընթերցասիրաց մի առ մի բացատրել :

Շարունակելի

ՍՐԻԱՀԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

1868 Նիկոմիդա 12 Յունվար .

Ազնիւ Էրիզա

Ձեմ յիշեր , Թէպէտ տասը տարիէ ի վեր է որ ո՛չ զքեզ տեսած , եւ ո՛չ ալ մէկ գրութիւնդ առած ունէի : Մինչդեռ շատ անգամ զՁեզ հոն կը կարծէի ուր որ մեր բարեկամական առաջին մտերմալի ողջոյնը սրտերնիս փափուկ թելով մը մէկգմէկ կը կապէր : Ահ բարեկամ ինչպէս որ ես՝ անշուշտ զուրք ալ ինձ նման այսչափ երկար միջոցիս մէջ դեռ մեր բարեկամական ողջոյնը կը յիշէր ու կը դժարիք հեռանալ այն տեսարանէն , ուր որ բարեկամս Վռամին հետ Ձեր ներկայութիւնը պատուելով՝ ուրախաւիժ երջանկութիւն մը կզգայինք , սակայն հիմայ որ մեր կենաց երջանկաւիժ վայրկեաններուն մէջ տեղէն տարիներ սահներ ու անցեալ տարիներու վրայ դիզուելով հոյակապ դարերու կերպարանքն առած մատենագրական ասպարէզին մէջ հսկայտն սիւն մը կանգնած է : Արդեօք հրապիսի խոր մտմտութեամբ մը զՁեզ երերածափ նաւակի մը մէջ առած եւ Ովկիանու անհեղադոյ պէտքը վրայէն սրանալով ուրիշ աշխարհք մը տարած է . . . Ահ , բարեկամ , մի զարմանար այսօր՝ երբ ստորագրութիւնս տեսնելու բարեպատեհ առիթը վայելելու ըլլաս եւ ալ

քեզի հետ Վրամի համար միևնույն ցաւը կզգամ, ես ալ քեզի չափ անոր ապերջանիկ թշուառութիւնը կողքամ. դու որ անոր վրայ տասը տարուան մտերմական յիշողութիւն մը ունիս. քաջ գիտեմ որ պիտի ցաւիս. ուրեմն ես որչափ պէտք է արտասուեմ, ու կրկին արտասուեմ, երբ անոր սիրահարական փայլակի մը դեղին լուսին դարձած՝ սգալի կերպարանքը աչքիս առաջ ունիմ. . . Ահ, տասնամեայ հեռաւորութիւն մը կրնայ Ձեր փափուկ սրտին մեղմ մխիթարութիւն մը սեպուիլ. իսկ մերձաւորի մը համար անկարելի կ'երեւի. . . տեսնել ու չ'ցաւիլ, զգալ՝ ու անզգայ մնալ, լսել ու լռել. . . Ինչ կը նշանակեն ասոնք. ան բարեկամ չէք գիտեր ինչ մեծ դժբաղդութեան մէջ կը ծփար սիրտս՝ ասկէ երկու ժամ առաջ, ու հիմայ ինչ մխիթարական բերկրանք մը կ'զգամ, երբ անծանօթ ձեռքի մը հաղորդութեամբ՝ Ձեր Էրիզան ձեռքս կը հասնի. ան, Էրիզա ըսել ու մրրկալից հողմերու և դառնաշունչ բամբներու նման սահիլ երթալ չըլլար. անշուշտ մեր Հայկական երկրի անունն է ըսի ասիկայ, ու քիւրաւոր անգամ կարդալով զինքը համբուրեցի. ան, նոյն վայրկենին տղայուհիւնս միտք բերելով՝ սկսայ բարեկամներս մի առ մի ի միտ ածել ու վայրկեան մը կանգ առնել. գլուխս սկսաւ պտոյտ մը ընել, և ահա յանկարծ Ձեր անունը հոն նկարուած տեսնելով ինքզինքս ցնորեալ մը կարծել. . . հրչափ որ կրօնամոլութեան սեւադէմ հագուստը մերկացած ու կտոր կտոր բզքտած օդոյն սրածուիչ թեւերուն յանձնելով զանի ինձմէ հեռացուցած էի, իսկոյն սծափ գալով՝ կրօնամոլութիւնը ձեռք առի՝ և հարիւր անգամ երեսս խաչակնքելով ջերմէ ցնորած հիւանդի ձման տեսածս երազ մը կարծեցի. սակայն քիչ մը վերջը աղէկ համոզուեցայ, որ տեսածս երազական ցնորք մը չէր. այլ բուն իսկ Ձեր մականունն տառերը. մէկէն ի մէկ՝ ոտքի ելնելով սենեակէս ներս մտայ. ու ձեռքս ճակտիս դրած խորին մոմտութի մէջ գահավէժ ընկայ. . . և զրասենեկիս մօտենալով զրիչս ձեռք առի, այս նամակս Ձեզ գրելու մտօք. սակայն բարեկամ, գիտեմ որ այսպիսի երկտող նամակաւ մը այսօր զՁեզ զոհ չպիտի

կարենամ ընել. անշուշտ մտերիմդ Վրամի և իւր սիրուհւոյն Վէրգինէի վրայօք տեղեկութիւններ պիտի խնդրես ինձմէ: Իսկ եթէ լռեմ՝ կասկածելի պիտի երևնամ քեզ. բայց եթէ՝ երկարաբանութենէ չես ձանձրանար. ան. . . լեզուս բերնիս մէջ չ'շարժիր. բոլոր մարմինս կը սառսո՛ւի, ու մատուներես տկարանալով զրիչս վար կիյնայ. այն երկու սիրահարաց տարաբաղդութեան վրայ փոքր ինչ ակնարկ մը ընել ուզած ատենս, եթէ կընդունիս սիրով, կըրնամ այսուհետեւ անոնց կրած անհամար վշտաց և դառնութեանց տարագիրը Ձեզ շարունակելու ծառայութենէ չ'դադրիլ. ո՛ր տարագիր մը որ հիները կը գերազանցէ, և ուր ներկային մէջ զտնուած եռանդուն երիտասարդաց սրտին մէջ անշիջանելի բոց մը, և Աստղկայ նետերէն դուրս ցայտած մահաբեր խոցերէն մեծ վէրք մը կ'ը բանայ. . . ան, բարեկամ, լռել անհնար է. խօսքս աուր, եթէ՝ կը յօժարիս բարեկամիդ վիճակին վրայ տեղեկութիւններ տալու երկարախօսութեանս: Եթէ ոչ՝ այսչափով քեզ զոհ ըրած համարելով կը լռեմ:

Բարեկամդ

ՀՐԱՆՏ

— Ո՛չ, մի լռեր, այլ շարունակէ:

Փ Ո Ւ Ն Ջ

— Ձգայական արդեամբք, կանայք անգին են. իսկ գորովական արդեամբք կարող չեն անգին ըլլալ.

— Կնոջ մը սիրտը բնականաբար կը յափշտակեն այն բաները, որոնք որ շքեղ ու վայելուչ կերևին իրեն. կինը ի մանկութենէ ինքզինքը պատճառելու զարդարանքը կը սիրէ, և այս պատճառնաց հրապոյրը իր հասակին հետ կը բազմապատկի, ու սիրով կը փափաքի դիւրապէս աշխարհի սովորութեանց հետեւիլ: Կանխահաս ժամերու մէջ իր հեշտական ու վայելչական կարողութիւնը կ'ստանայ: Կնոնաց քաղցրիկ կերպարանքն ու պարկեշտութիւնը զառամեալ ծերութիւնը անգամ կ'զմայլեցնէ: Մէկ խօսքով մարդս որչափ որ տարաբաղդ վիճակի մէջ ալ գտնուելու ըլլայ, դարձեալ կինը մարդկային ընկերական զարդն է:

Կանանց իշխանութիւնը, սիրոյ և քաղցրեմեան իշխանութիւն մըն է, հրամաննին բոլորէ. սպասանքը արտասուք: Կինը պէտք է թագաւորէ տանը մէջ, ինչպէս որ պաշտօնատարը վիճակի մը մէջ:

— Կանայք մարդկային սեռին ամենանպաստաւոր և դիւրաբեկ ճինապակներն են : Պէտք է անոնք յիրով խնամել, և ոչ թէ զօրեղ փորձերով գործածել :

— Կինը սիրոյ և հեշտութեան անգին գանձն է, այն ծաղիկն է՝ ուր բաղձանք կը բուրէ, այն բաժակն է, ուր երջանկութիւն կը պարունակէ :


— Եթէ մարդս բնութեան ամենագեղեցիկ ծաղիկն է, կինն ալ անոր անուշաբոյր զեփիւռն է :

— Կինը երկնային մանանան ու սիրոյ շառաւիղն է, որ պտղաբերութեամբ մարդկային սեռը կը կենդանացնէ : Քաղցրիկ լոյս մ'է, որով մարդկային գոյութիւնը անոր իսկեզօծ ցոլացման կը կարօտի :

— Բնութեան երևութիւն մէջ մարդկային աչքին կատարեալ և ըսքանչելի վայելչութիւն մը որ կը նշմարուի, այն է միմիայն կանանց գեղեցկութիւնը :

— Ինչու համար Արարիչն կանանց սիրոյ քաղցրութիւն մը ու գեղեցկական շքեղութիւն մը պարգևած է, եթէ ոչ՝ մարդկային սեռի երջանկութեան համար :

Զանազան Հեղինակներ



ՅԱՅՆ ՍԻՐԱՀԱՐԻ

Այս արգասիք են իմ սիրոյս
Դոժեալ խոսմանցդ ապերախս՝
Սեւափղեալ զարեւ կենացս
Հարումն այլում խօսեցմար բն :

Մերժեցիր զիս . . .

Երբս քարեալ :

Պատանեակդ անփոյր ցաւոյս
Մի արհամարհ գրեւ զիէզս
Դերի նըսեմ բաղդիս բերման
Եւ հնազանդ Հօրս կամաց :

Դիմեմ ի մահ

Մնաս քարեալ

ԻԶԱՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ք Ն Ա Ր Ն

ՅԱԻԵՐԱԿՍ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՏԱՆԵՐԳՈՒԹԻՒՆՔ

Ա . Յ . ԱՅՎԱԶԵԱՆԷ

Այս վերնագրով 80 երեսէ բաղկացեալ եւ Հայրենասէր երիտասարդի մը սրտէ բղխած եւանդուն ոտանաւորներ պարունակող պատկերազարդ տետրակ մըն է, որ կը գտնուին բոլոր Հայ ազգի գրատունները . զին Ծ. դահեկան :

ԱԶԴ

Հանդէսս արդէն ձեռքէ ծախուելէ զատ, կը գտնուի նաեւ յետեւեալ տեղերը,

— Քիւրքճի խան. վարի յարկ 23 թիւ.

— Քիւրքճի խանի դէմ :

— Զիւմպիլլի խանի տակը 106 թիւ. Գաֆաֆեանի գրատունները .

— Մահմուտ փաշայի գլուխ գաշըքճի խանի քովի գրավաճառի խանութը .

— Քէօփրիւ պաշի Իհթիսապի դէմի սրճարանը .

— Ղալաթիա քէօփրիւ պաշի Քօմիսիօն խանի քովի եւ Բերայ Ժարտէն տը Ֆլէօրի դէմ. ծրխավաճառաց խանութները :

Խմբագիր-Տնօրէն

Խ Ա Չ Ի Կ Թ . Թ Է Ր Զ Ե Ա ,

Առաքել արք. բժշկական դպրոցի

Տ Պ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ւ Ն Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Կ. պօլիս, Ուղան Զարե Ծէրիճ փառա խան, թիւ 13